ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2018թ սեպտեմբերի 17 N 115

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԿԱՐԲԻԻ ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ՕՀԱՆԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>, <<ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ՄՈՒՂՆՈՒ Մ. ԱՇՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ԵՎ <<ԹԱԼԻՆԻ ՄԵԼԱՆԹՈՆ ԱՐՍԼԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության թիվ 01101/12508-18 գրությունը. **Կարգադրում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Կարբիի Վահան Թեքեյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Օհանավանի միջնակարգ դպրոց>>, <<Բյուրականի միջնակարգ դպրոց>>, <<Մուղնու Մ. Աշճյանի անվան հիմնական դպրոց>> և <<Թալինի Մելանթոն Արսլանյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել համակարգի գնահատման աուդիտ՝ ներքին աուդիտի բաժնի պետ Սարգիս Մուրադյանի, բաժնի գլխավոր մասնագետ Ենոք Մինասյանի, կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ Ռուզաննա Նալբանդյանի, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի խորհրդական Արմինե Խերանյանի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Ստյոպա Մարդանյանի և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հանրակրթության վարչության պետի տեղակալ Նոննա Սահակյանի կողմից աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ պետական ոչ առևտրային կազ-մակերպության տնօրեններին և հաշվապահներին:

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 20 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2018 թվականի սեպտեմբերի 18-ից, ավարտել հոկտեմբերի 17-ին:

Ա.ՍԻՄՈՆՅԱՆ